ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություններ ____ 2

2. 2017 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները ____ 4

2.1. Միավորների բաշխման հիստոգրամները ____ 4

2.2. Վիճակագրական տվյալներ ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ ____ 5

2.3. Մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների ____ 6

3. 2013-2017 թվականների 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատություն ____ 7

4. Ավարտական քննություններին 9-րդ դասարանի շրջանավարտների ընտրությունը օտար լեզուներից և բնագիտական առարկաներից ____ 9

5. 2017 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի 10

6. Վիճակագրական տվյալների համեմատությունն ըստ բնակավայրերի տիպերի ____ 13

7. Ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի ____ 15

8. 2017 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ____ 16

1. Ընդհանուր տեղեկություններ

9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան՝ 4-10 միավոր և ավարտական քննություններից՝ 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

2017 թվականի հունիսի 1-26-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարանի ավարտական քննություններն անցկացվում են.

1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ փոխադրություն. քննությանը տրվում է 90 րոպե:

2) «Հայ գրականություն» առարկայից՝ բանավոր:

3) «Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր:

4) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (քննությանը տրվում է 120 րոպե):

5) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայից՝ գրավոր (սովորողի ընտրությամբ, քննությանը տրվում է 120 րոպե):

6) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ բանավոր (սովորողի ընտրությամբ):

7) «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար):

Ավարտական քննություններն անցկացվել են երկու փուլով: Առաջին փուլին մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարանի 2017 թվականի շրջանավարտները, իսկ երկրորդ փուլին՝ նախորդ քննությանը հիվանդության պատճառով չներկայացած կամ դրական միավորների շեմը չանցած շրջանավարտները:

Յուրաքանչյուր քննության ավարտից հետո ավարտական քննությունների գնահատականները հանրակրթական ուսումնական հաստատությունների օպերատորների կողմից առցանց համակարգով մուտքագրվել են ԳԹԿ տվյալների բազա: Մինչև հոկտեմբերի 9-ը ԳԹԿ տվյալների բազան բաց է եղել, և հանրակրթական ուսումնական հաստատությունների օպերատորները հնարավորություն են ունեցել մուտքագրել երկրորդ փուլի գնահատականները:

Այն դպրոցները, որոնք ուշացրել են գնահատականների մուտքագրումը, նրանց արդյունքները չեն վերլուծվել:

2017 թվականի ավարտական քննությունների առաջին փուլը անցկացվել է հետևյալ ժամանակացույցով.

Աղյուսակ 1

Քննությունը	Քննության օրը
Հայոց լեզու և հայ գրականություն (փոխադրություն)	05.06.2017 թ.
Հայ գրականություն (բանավոր)	08.06.2017 թ.
Մաթեմատիկա (գրավոր)	12.06.2017 թ.
Օտար լեզու (բանավոր)	15.06.2017 թ.
Բնագիտական առարկաներ (գրավոր)	19.06.2017 թ.
Հայոց պատմություն (բանավոր)	22.06.2017 թ.
Ռուսաց լեզու (ռուսական դաս., բանավոր)	26.06.2017 թ.

Ավարտական քննությունների ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարով, որը տվյալ դեպքում կազմում է 35 միավոր: Գնահատման 35 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և ավելի) միավորները համապատասխանում են 9 և ավելի թվով ճիշտ կատարված առաջադրանքներին:

Աղյուսակ 2

Նախնական միավոր (0-35)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-35)	Միավորը 20 միավորանոց համակարգում
0	**1**	15-17	**11**
1	**2**	18-20	**12**
2	**3**	21-23	**13**
3	**4**	24-26	**14**
4	**5**	27-28	**15**
5-6	**6**	29-30	**16**
7-8	**7**	**31-32**	**17**
9-10	**8**	**33**	**18**
11-12	**9**	**34**	**19**
13-14	**10**	**35**	**20**

2. 2017 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները

2.1. Միավորների բաշխման հիստոգրամները

Միավորների բաշխման հիստոգրամը սյուների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Սյան բարձրությունը համապատասխանում է միավորի հաճախությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին):

Հիստոգրամ 1











Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը[1] (Mean), ստանդարտ շեղումը[2] (St.Dev) և մասնակիցների թիվը (N):

Բաշխման հիստոգրամներից երևում է, որ գրեթե բոլոր առարկաների համար 8 միավոր ստացածների թիվը զգալիորեն բարձր է մյուս միավորների թվից: Ակնհայտ է, որ ցածր միավորները արհեստականորեն բարձրացվել են դպրոցների կողմից:

2.2. Վիճակագրական տվյալներ ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ

Աղյուսակ 3-ում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ մասնակիցների թիվը, միջին միավորը, ստանդարտ սխալը և ստանդարտ շեղումը:

[1] Միջին միավորը բնորոշում է քննություն հանձնողների գիտելիքների միջին մակարդակը:

[2] Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է:

Աղյուսակ 3

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն (փ.)	29084	12.81	0.022	3.757
Հայ գրականություն (բ.)	29133	13.67	0.025	4.189
Հայոց պատմություն (բ.)	28339	12.99	0.025	4.141
Մաթեմատիկա (գ.)	29083	12.04	0.020	3.334
Աշխարհագրություն (գ.)	9831	13.20	0.032	3.152
Կենսաբանություն (գ.)	10496	13.46	0.033	3.338
Քիմիա (գ.)	2122	13.22	0.082	3.798
Ֆիզիկա (գ.)	6461	13.49	0.044	3.517
Ռուսաց լեզու (բ.)	20225	13.27	0.029	4.191
Անգլերեն (բ.)	7631	15.44	0.046	3.979
Գերմաներեն (բ.)	589	13.79	0.173	4.194
Ֆրանսերեն (բ.)	469	14.11	0.212	4.596

Որքան փոքր է ստանդարտ շեղումը, այնքան միջին միավորը հուսալի է: Այսինքն՝ որքան միավորները համախմբված են միջին միավորի շուրջը, այնքան լավ է այդ միջին միավորը բնորոշում տվյալ բազմությունը:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից (15.4), իսկ ամենացածրը՝ «Մաթեմատիկա» առարկայից (12.04):

2.3. Մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են 2017 թվականի 9-րդ դասարանի ավարտական քննություններից աշակերտների արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ ստացած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 1



Դիագրամում տեսնում ենք, որ բարձր՝ 18-20 միավորներ հավաքած աշակերտների խմբերում ամենամեծ տոկոսը (43.4 %) գրանցվել է «Անգլերեն» առարկայից, ամենափոքր տոկոսը (9.3 %)՝ «Մաթեմատիկա» առարկայից: Միջին միավորներ հավաքել են մասնակիցների 22.4-35.3 տոկոսը: Ցածր միավորներ հավաքած աշակերտների առաջադիմության խումբը բոլոր առարկաներից կազմել է ամենամեծ տոկոսը (38.8-67.7 %), բացառությամբ «Անգլերեն» առարկայից (27.5 %): Անբավարար ստացած աշակերտների խումբը կազմում է 0.3-3.8 տոկոս:

3. 2013-2017 թվականների 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատություն

Ստորև դիագրամում ներկայացված են 2013-2017 թվականներին «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» առարկաներից, օտար լեզուներից, ինչպես նաև բնագիտական առարկաներից ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունները:

Դիագրամ 2



Դիագրամում տեսնում ենք, որ 2013-2015 թվականներին մասնակիցների թիվը նվազել է: 2014-2015 թվականին մասնակիցների թվի կտրուկ նվազումը, այնուհետև 2015-2016 թվականին կտրուկ աճը պայմանավորված է հանրակրթական հիմնական ծրագրերի փոփոխությամբ՝ 11-ամյա կրթությունից 12-ամյայի անցումով: Հանրակրթական հիմնական ծրագրերի փոփոխության մասին մանրամասն ներկայացված է 2014-2015 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծության մեջ[3]: 2016-2017 թվականին նկատվել է մասնակիցների թվի աճ:

[3] 2014-2015 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն, էջ 7:

4. Ավարտական քննություններին 9-րդ դասարանի շրջանավարտների ընտրությունը օտար լեզուներից և բնագիտական առարկաներից

Ստորև բերված դիագրամներում ներկայացված է շրջանավարտների ընտրությունը բնագիտական առարկաներից և օտար լեզուներից՝ տոկոսային թվերով:

Դիագրամ 3



Բնագիտական առարկաների ընտրության դեպքում, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, շրջանավարտները նախապատվությունը տվել են «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներին, այնուհետև «Ֆիզիկա» առարկային, իսկ «Քիմիա» առարկան ընտրել է մասնակիցների ընդամենը 7.3 տոկոսը: Օտար լեզուներում մասնակիցների մոտ 70 տոկոսը նախընտրել է «Ռուսաց լեզու» առարկան:



Վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ բնագիտական առարկաների միջին միավորները (13.2-13.5) նշանակալիորեն չեն տարբերվում իրարից: Օտար լեզուներից անգլերենի միջին միավորը (15.4) նշանակալիորեն բարձր է մյուս օտար լեզուների

միջին միավորներից, որոնք նույնպես նշանակալիորեն չեն տարբերվում իրարից (13.3-14.1):

5. 2017թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի

2017 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների 53.3 տոկոսը տղաներ են, 46.7 տոկոսը՝ աղջիկներ: Աղյուսակ 4-ում բոլոր առարկաներից ներկայացված է մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը՝ ըստ սեռերի:

Աղյուսակ 4

Առարկան	Աղջիկ			Տղա		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն (փ.)	13596	14.08	3.52	15488	11.69	3.60
Հայ գրականություն (բ.)	13625	15.11	3.88	15508	12.40	4.03
Հայոց պատմություն (բ.)	13251	14.12	4.03	15088	12.00	3.98
Մաթեմատիկա (գ.)	13594	12.66	3.37	15489	11.50	3.21
Աշխարհագրություն (գ.)	4043	14.02	3.09	5788	12.63	3.07
Կենսաբանություն (գ.)	5875	14.24	3.21	4621	12.47	3.23
Քիմիա (գ.)	1037	14.21	3.63	1085	12.28	3.72
Ֆիզիկա (գ.)	2563	14.18	3.42	3898	13.04	3.51
Անգլերեն (բ.)	4395	16.25	3.55	3236	14.35	4.26
Ռուսաց լեզու (բ.)	8556	14.34	4.07	11669	12.48	4.10
Ֆրանսերեն (բ.)	253	15.71	4.14	216	12.24	4.40
Գերմաներեն (բ.)	311	15.46	3.72	278	11.92	3.91

Վերլուծությունից պարզվել է, որ բնագիտական առարկաներից տղաները նախապատվությունը տվել են «Աշխարհագրություն» առարկային, աղջիկները՝ «Կենսաբանություն» առարկային, օտար լեզուներից տղաների 75.8 տոկոսը, աղջիկների 63.3 տոկոսը նախընտրել են «Ռուսաց լեզու» առարկան:

Վերը ներկայացված աղյուսակում տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դա ավելի

պարզ է երևում դիագրամ 7-ում, որտեղ ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների համեմատություններն ըստ առարկաների:

Դիագրամ 4



Աղջիկները ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել հատկապես «Հայ գրականություն», «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաներից: Այս առարկաներից միավորների տարբերությունը եղել է 2.7-3.5: Տղաների և աղջիկների միավորների տարբերությունները համեմատաբար փոքր են եղել՝ 1.1-1.2 միավոր, «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաներից:

Ստորև հիստոգրամներում ներկայացված են տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:

Հիստոգրամ 2





Հայոց պատմություն (բանավոր)



Մաթեմատիկա (գրավոր)



Աշխարհագրություն (գրավոր)



Կենսաբանություն (գրավոր)



Քիմիա (գրավոր)



Ֆիզիկա (գրավոր)



Ռուսաց լեզու (բանավոր)



Անգլերեն (բանավոր)



Գերմաներեն (բանավոր)



Ֆրանսերեն (բանավոր)



Ինչպես տեսնում ենք ներկայացված հիստոգրամներում, գրեթե բոլոր առարկաներից տղաների միավորները կենտրոնացած են ցածր միավորների շուրջ, հատկապես 8 միավորի: Ընդհանուր միջին միավորը բարձրացնում է աղջիկների խումբը:

6. Վիճակագրական տվյալների համեմատությունն ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 5-ում և 6-ում ըստ բնակավայրերի տիպերի ներկայացված են քննությունների մասնակիցների թիվը, տոկոսը, միջին միավորը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 5

Բնակավայրի տիպը	Հայոց լեզու և հայ գրականություն (փ.)			Հայ գրականություն (բ.)			Հայոց պատմություն (բ.)		
	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավոր (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Խոշոր քաղաքներ	11835	40.7%	13.1 (3.7)	11895	40.8%	14.0 (4.1)	11430	40.3%	13.4 (4.1)
Միջին քաղաքներ	4010	13.8%	13.2 (3.7)	4007	13.8%	13.9 (4.1)	3929	13.9%	13.2 (4.1)
Փոքր քաղաքներ	2729	9.4%	13.2 (4.0)	2729	9.4%	14.0 (4.3)	2696	9.5%	13.5 (4.2)
Գյուղեր	8055	27.7%	12.2 (3.7)	8054	27.6%	13.0 (4.2)	7889	27.8%	12.3 (4.0)
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1235	4.2%	12.2 (3.6)	1227	4.2%	13.0 (4.1)	1225	4.3%	12.2 (3.9)
Բարձրլեռնային գյուղեր	1145	3.9%	12.7 (3.8)	1146	3.9%	13.2 (4.3)	1095	3.9%	13.0 (4.2)
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	75	0.3%	13.5 (3.1)	75	0.3%	13.9 (3.8)	75	0.3%	13.5 (3.7)

Աղյուսակ 6

Բնակավայրի տիպը	Մաթեմատիկա			Բնագիտական առարկաներ			Օտար լեզուներ		
	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավոր (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Խոշոր քաղաքներ	11869	40.8%	12.5 (3.3)	11710	40.5%	13.8 (3.4)	11935	41.3%	14.6 (4.2)
Միջին քաղաքներ	4013	13.8%	12.2 (3.4)	3972	13.7%	13.7 (3.4)	3949	13.7%	14.2 (4.2)
Փոքր քաղաքներ	2702	9.3%	12.5 (3.6)	2789	9.6%	13.7 (3.9)	2688	9.3%	14.0 (4.4)
Գյուղեր	8040	27.6%	11.4 (3.1)	7973	27.6%	12.7 (3.2)	7896	27.3%	12.7 (4.1)
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1241	4.3%	11.1 (3.1)	1244	4.3%	12.7 (3.1)	1228	4.2%	12.8 (4.2)
Բարձրլեռնային գյուղեր	1143	3.9%	11.4 (3.1)	1147	4.0%	12.8 (3.1)	1143	4.0%	13.3 (4.0)
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	75	0.3%	12.1 (2.6)	75	0.3%	13.8 (2.4)	75	0.3%	13.9 (3.6)

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բոլոր երեք տիպի քաղաքների շրջանավարտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվում միմյանցից, սակայն նշանակալիորեն բարձր են գյուղական տիպի բնակավայրերի շրջանավարտների միջին միավորներից, բացառությամբ սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի, որոնց շրջանավարտների միջին միավորները չեն զիջում քաղաքային բնակավայրերի շրջանավարտների միջին միավորներին:

Արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի ավելի մանրամասն ներկայացված են հավելված 1-ում:

7. Ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

Դիագրամ 5-ում բոլոր առարկաներից ներկայացված են ավարտական քննությունների մասնակիցների միջին միավորներն՝ ըստ դպրոցների տիպերի:

Դիագրամ 5



	Ավագ	Հիմնական	Միջնակարգ	Հենակետա-յին	Հատուկ	Վարժարան	Կրթահա-մալիր	Մասնագի-տացված	ՍՊՀ
Հայոց լեզու և հայ գրականության (փ.)	13.3	13.2	12.2	13.7	11.0	13.0	13.3	12.0	15.0
Հայ գրականության (բ.)	14.2	14.0	13.0	14.2	11.5	14.8	14.7	13.1	16.2
Հայոց պատմության (բ.)	13.6	13.5	12.3	13.3	11.2	13.3	12.5	11.8	14.9
Մաթեմատիկա (բ.)	12.5	12.4	11.3	13.7	10.3	14.1	12.5	10.3	14.5
Բնագիտական առարկաներ (գ.)	13.7	13.9	12.6	13.6	10.0	14.8	13.5	12.2	15.7
Օտար լեզուներ (բ.)	14.5	14.4	12.8	15.0	11.1	16.0	15.2	14.5	16.9

Արդյունքներն ըստ դպրոցների տիպերի ավելի մանրամասն ներկայացված են հավելված 2-ում:

8. 2017 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 8-ում ներկայացված են բոլոր առարկաների ավարտական քննությունների միջին միավորները (ստանդարտ շեղումը) ըստ վարչատարածքային միավորների: Մգեցված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Աղյուսակ 7

Վարչատա-ածքային միավորը	Միջին միավորը (ստանդարտ շեղումը)					
	Հայոց լեզու և հայ գրակ. (փ.)	Հայ գրա-կանություն (բ.)	Հայոց պատ-մություն (բ.)	Մաթեմա-տիկա (գ.)	Բնագիտական առարկաներ (գ.)	Օտար լեզուներ (բ.)
Արագածոտն	12.5 (3.67)	**13.7** (3.97)	**13.2** (3.93)	11.4 (2.98)	12.9 (3.15)	13.4 (3.95)
Արարատ	12.4 (3.74)	13.0 (4.26)	12.3 (4.10)	11.1 (3.07)	12.7 (3.22)	13.1 (4.22)
Արմավիր	12.5 (3.72)	13.1 (4.16)	12.2 (4.13)	11.8 (3.33)	12.8 (3.57)	12.8 .4.31()
Գեղարքունիք	**13.2** (3.86)	**13.7** (4.33)	**13.4** (4.16)	**12.0** (3.34)	13.1 (3.25)	13.7 (4.19)
Երևան	**13.1** (3.65)	**14.0** (4.16)	**13.3** (4.15)	**12.5** (3.31)	**13.7** (3.35)	**14.7** (4.17)
Լոռի	12.3 (3.87)	13.3 (4.29)	12.8 (4.14)	11.6 (3.25)	12.9 (3.35)	13.2 (4.31)
Կոտայք	12.5 (3.75)	13.3 (4.17)	12.6 (4.02)	11.8 (3.18)	13.2 (3.21)	13.5 (4.22)
Շիրակ	**13.2** (3.76)	**14.2** (3.99)	**13.7 (**4.09)	**12.7** (3.54)	**13.9** (3.43)	**14.2** (4.07)
Սյունիք	**12.9** (3.84)	**13.9** (4.10)	12.9 (4.22)	**12.3** (3.49)	**13.8** (3.36)	**13.9** (4.29)
Վայոց ձոր	**13.4** (3.85)	**14.5** (4.09)	**13.6** (4.10)	**12.7** (3.66)	**14.4** (3.37)	**14.4** (4.14)
Տավուշ	12.5 (3.81)	13.3 (4.12)	12.5 (4.04)	11.5 (3.31)	13.3 (3.16)	13.1 (4.25)

Նկատելի է, որ Շիրակի և Վայոց ձորի մարզերում, ինչպես նաև Երևանի դպրոցների շրջանավարտների միջին միավորները ավարտական քննություններից բոլոր առարկաների համար բարձր են ընդհանուր միջին միավորներից: Արմավիրի, Արարատի, Լոռվա, Կոտայքի և Տավուշի մարզերում ոչ մի առարկայից ընդհանուր միջին միավորից բարձր միավոր չի գրանցվել:

Արդյունքներն ըստ ըստ վարչատարածքային միավորների ավելի մանրամասն ներկայացված են հավելված 3–ում: